

Ժողովուրդ

20 փետրվարի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

21
(2871)

Թ. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՔԱՅԼԵՐ ՉԵՆ ԱՐԵՆ. ՓԱՍՏԵՐՈՎ



Արթուր Երոյան
գնդապետ

ՀՀ ՋՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակալի պաշտոնում նշանակվել է 2024 թվականի փետրվարի 13-ին

ՀՀ ՋՈՒ ԳՇ ՕՂԵՐԱՏԻՎ
ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ - ՀՀ ՋՈՒ ԳՇ ՊԵՏԻ
ՏԵՂԱԿԱԼ




Կարեն Գրիգորյան
գեներալ-մայոր

ՀՀ ՋՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակալի պաշտոնում նշանակվել է 2024 թվականի փետրվարի 14-ին

Ինչու՞ Ներքին Յանի հայկական դիրքերի ուղղությամբ արդրեջանական կրակի հետեանքով հայկական կողմի 4 զոհից հետո Պաշտպանության նախարարությունը ԳՇ պետի տեղակալների նշանակման կամ նրանց փոփոխության մասին մտածեց, ինչո՞վ էին մինչ այս զբաղված ՊՆ-ում, երբ մեր երկիրը պատերազմի մեջ է: Ինչպես հայտնի է, փետրվարի 13-ին Ներքին Յանի հայկական դիրքերի ուղղությամբ արդրեջանական կրակի հետեանքով հայկական կողմը ունեցավ 4 զոհ, 1 վիրավոր: Պարզվում է՝ դեպքից հետո ՊՆ-ում սկսվել են կադրային նշանակումներ ու փոփոխություններ: Կամո Քոչոնցը ազատվեց ԳՇ պետի տեղակալի պաշտոնից, եւ նրա փոխարեն ՊՆ ԳՇ պետի տեղակալ նշանակվեց Արթուր Երոյանը: Մինչ այդ պատերազմող երկրում ԳՇ պետի տեղակալի երկու պաշտոն տեսական ժամանակ շարունակում էին թափուր մնալ, ու ՊՆ-ում սթափվեցին այն բանից հետո, երբ Ներքին Յանի հայկական դիրքերի ուղղությամբ արդրեջանական կրակի հետեանքով հայկական կողմը ունեցավ 4 զոհ, ու մեկը մյուսի հետեից սկսեցին նշանակումներ կատարել: Մասնավորապես, 2024 թվականի փետրվարի 14-ին ՀՀ ՋՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակալ նշանակվեց Կարեն Գրիգորյանը: Ստացվում է, որ մինչև դժբախտությունը մեր դուռը չի հասնում, գործում քայլեր չեն իրականացնում կոռումպացված իշխանությունները:

Երեանի ավագանու «Հանրային ծայր» խմբակցությունում խառն են չեն կողմնորոշվում՝ ինչպես վարվել ավագանու անդամի իրենց մանդատների հետ: «Հանրային ծայր» խմբակցության անդամ Նանա Սարգսյանը վերջերս հայտարարել էր՝ պատրաստվում է վայր դնել ավագանու մանդատը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հիմա էլ նա մտափոխվել է ու չի պատրաստվում դեռ վայր դնել մանդատը: «Առաջիկայում չեմ պատրաստվում վայր դնել մանդատս, դեռ կպահեմ այն. երբ հարմար կգտնեմ, կդնեմ», -ահա այսպես արձագանքեց նա «Ժողովուրդ» օրաթերթի հարցին: Նշենք, որ այս խմբակցությունը ավագանիում ամենափոքր ներկայացվածությունն ունեցող ֆրակցիան է, որն ունի ընդամենը 6 անդամ, որոնցից Արտակ Գալստյանը կալանավորված է, ուստի չի կարող մասնակցել նիստերին, Տիգրան Ուրիխանյանի նկատմամբ հանրային քրեական հետախուզում է հարուցված, նա հետախուզման մեջ է, Անուշ Գինոսյանն էլ հայտարարել է, որ դուրս է գալիս «Հանրային ծայր»-ից ու շարունակելու է հանդես գալ որպես ավագանու անկախ անդամ: Փաստացի ստացվում է, որ այս պահի դրությամբ ֆրակցիան ավագանիում ներկայացված է ընդամենը 3 հոգով:



Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանը պատրաստ է գնալ Ազգային ժողով էլ հանդիպել իշխանական պատգամավորների հետ, բայց դեռ հրավեր չունի: Ինչպես հայտնի է, դատական դեպարտամենտի հրապարակած սկանդալային տեսանյութից հետո ԱԺ ԲԳ իշխող խմբակցության պատգամավորները պատրաստվում են ԲԴԻ նախագահ Կարեն Անդրեասյանին կանչել ԱԺ պարզաբանումների: Խոսքը «Ռեբերտ Քոչոնյանի, Սերժ Սարգսյանի եւ այլ գործերի տապալման մեղավորները, բացահայտում դատական իշխանությունից» վերնագրով տեսանյութի մասին է, որտեղ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմը մեղադրում է առանձին դատավորների եւ փաստաբանների՝ նախկին նախագահների եւ բարձրաստիճանի այլ պաշտոնյաների դատավարությունների ձգձգման համար: Տեսանյութում ակնհայտորեն թիրախավորելով դատավորներին ու փաստաբաններին՝ ԲԴԻ-ն փորձում է արդարանալ հանրային հետաքրքրություն ներկայացնող դատական մի շարք գործերի բացահայտման ծախսողման համար: Հավանաբար, ԲԴԻ նախագահ Կարեն Անդրեասյանն ինքնազուրկ է գործել ու նման խայտառակ տեսանյութ պատրաստելու պատվեր է տվել, հիմա իշխանականները որոշել են փակ հանդիպման կանչել Անդրեասյանին՝ պարզաբանումներ ստանալու: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց Բարձրագույն դատական խորհրդի՝ հասկանալու համար, թե Կարեն Անդրեասյանը ստացել է արդյոք Ազգային ժողովից հրավեր եւ պատրաստ է արդյոք գնալ ԱԺ ու հանդիպել ԲԴԻ-ականներին: Ի պատասխան՝ ԲԴԻ խոսնակ Լիլիթ Շաբոյանը հայտնեց, որ դեռեւս շատ վաղուց Ազգային ժողովի անբինից ԲԴԻ նախագահ Կարեն Անդրեասյանը մինչ տեսանյութի հրապարակումը հայտնել էր, որ պատրաստ է ԱԺ բոլոր ֆրակցիաների հետ թե՛ բաց, թե՛ փակ քննարկումների, բայց դեռեւս հրավեր չի ստացել:



Այսօր՝ փետրվարի 20-ին, լրանում է արցախյան ազգային-ազատագրական պայքարի՝ Ղարաբաղյան շարժման 36-րդ տարին: 1988 թվականի փետրվարի 20-ին արցախահայությունը որոշում կայացրեց դուրս գալ արդրեջանական ԽՍՀ-ի կազմից՝ միավորվելով Հայաստանին: Արցախյան շարժումը հաղթանակի ու պայքարի մի նոր էջ բացեց հայ ժողովրդի պատմության մեջ: Այսօր՝ 36 տարի անց, ունենք մի իրավիճակ, երբ Արցախը լքված է, հայաթափված ու թշնամու արյունարբու ձեռքերում: Երեւանում եւ Ստեփանակերտում արցախյան շարժման օրը տարբեր միջոցառումներ են մշտապես կազմակերպվել: Չնայած ցավոտ հանգամանքների բերումով ստեղծված իրավիճակին՝ այս տարի էլ որոշ միջոցառումներ կլինեն Երեւանում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Արցախի ԱԺ բոլոր խմբակցությունները եւ կառավարությունը վաղ առավոտյան այցելելու են Եռաբլուր՝ հարգանքի տուրք մատուցելու նահատակների հիշատակին: Այնուհետեւ ՀՀ-ում Արցախի ներկայացուցչությունում տեղի կունենա հանդիպում-քննարկում՝ Արցախի ներկա եւ նախկին պատգամավորների մասնակցությամբ: Արցախի խորհրդարանը նաեւ հայտարարությամբ հանդես կգա: Ինչ վերաբերում է Հայաստանի իշխանություններին, թերեւս զարմանալի չէ. նրանց օրակարգում արդեն վաղուց Արցախի հարց չկա, ուստի որեւէ հատուկ միջոցառում չեն նախատեսում: Փոխարենը երեկոյան մեծ հանրահավաք է նախաձեռնել «Միասին» այլընտրանքային հասարակական-քաղաքական շարժումը՝ Ազատության հրապարակում՝ նվիրված արցախյան շարժման հերթական տարեդարձին: Հանրահավաքի հիմնական պահանջը լինելու է գործող իշխանությունների հրաժարականը: Ինչպես մեզ փոխանցեցին, հանրահավաքին մասնակցելու են նաեւ Հայաստանի եւ Արցախի ընդդիմադիր պատգամավորները, ինչպես նաեւ քաղաքական հայտնի գործիչներ:



«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ»

ԱՆՏԵՂԻ ԸՆԿՆԱԲԿՈՒՄ՝ ԲԱՆԿԻ ԸՈՒՐՁ

Փետրվարի 19-ին «Ամերիաբանկ»-ն ու BOGG PLC-ն գրեթե միաժամանակ հայաստանյայտյան սարածեցին հաստատված վերջին օրերին ՀՀ ֆինանսաբանկային ոլորտի ամենամեծ արկղը...

Այս հայտարարությունը, սակայն, կրկին լայն քննարկումների տեղիք տվեց ու մի շարք հարցեր բարձրացրեց, որոնց պատասխանները ստանալու համար «ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական հարցում ուղարկեց «Ամերիաբանկ»-ին:

Ռուբեն Վարդանյանն արդեն քանի ամիս է, ինչ գտնվում է Բաքվի բանտում: Ինչպես կարող է իրականանալ բանկի սեփականատերերի փոփոխություն, առանց ամենախոշոր սեփականատիրոջ ներկայության:

Նախ նշենք, որ բանակցությունները սկիզբ են առել դեռ երկու տարի առաջ: Բացի այդ, պարոն Ռուբեն Վարդանյանն ուղղակիորեն չի հանդիսանում «Ամերիաբանկ»-ի բաժնետեր: «Ամերիաբանկ»-ի 48.82% բաժնետեր է «Իմաստ Գրուպ»-ը, որում էլ Ռուբեն Վարդանյանի բաժնետերը հանձնված է հավատարմագրային կառավարման:

«Իմաստ Գրուպ»-ը «Ամերիաբանկ»-ի հինգ բաժնետերերից մեկն է: Բանկի բաժնետերերի կազմում են նաև Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը, Ասիական զարգացման բանկը, «Աֆեյան» հիմնադրամը:

Արդյոք «Ամերիաբանկ»-ը կվաճակվի որպես հայկական բանկ իր նույն իրավակազմակերպական կարգավիճակով:

Այս հնարավոր գործարքը ենթադրում է միայն բաժնետիրական կազմի փոփոխություն:



«Ամերիաբանկ»-ը՝ որպես ՀՀ առաջատար եւ լավագույն կորպորատիվ կառավարման համակարգ ունեցող բիզնես կառույց, մշտապես եղել է պոտենցիալ ներդրողների ու շահադրության կենտրոնում: Մյուս կողմից՝ հետագա ընդլայնման, երկարաժամկետ զարգացման եւ միջազգային ասպարեզ դուրս գալու նպատակով բանկը պարբերաբար դիտարկել է համագործակցության առաջարկներ: Բաժնետիրական կազմի փոփոխության մասով բանակցությունները սկսվել են դեռ երկու տարի առաջ:

Անկախ այս գործընթացի ելքից՝ «Ամերիաբանկ»-ը շարունակելու է դիմադրել զարգացմանն ու աճին միտված իր ծրագրերի իրագործումը:


«Ամերիաբանկ»-ը՝ որպես ՀՀ առաջատար եւ լավագույն կորպորատիվ կառավարման համակարգ ունեցող բիզնես կառույց, մշտապես եղել է պոտենցիալ ներդրողների ու շահադրության կենտրոնում: Մյուս կողմից՝ հետագա ընդլայնման, երկարաժամկետ զարգացման եւ միջազգային ասպարեզ դուրս գալու նպատակով բանկը պարբերաբար դիտարկել է համագործակցության առաջարկներ: Բաժնետիրական կազմի փոփոխության մասով բանակցությունները սկսվել են դեռ երկու տարի առաջ:

Անկախ այս գործընթացի ելքից՝ «Ամերիաբանկ»-ը շարունակելու է դիմադրել զարգացմանն ու աճին միտված իր ծրագրերի իրագործումը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՉԵՆ ՀԱՎԱՏՈՒՄ ԳՆԹ-Ի ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻՆ

Անհետ կորած զինծառայողների ծնողները, որոնք հրաժարվում են ընդունել ԴՆԹ թեստերի արդյունքները, երեկ գնացել են Հակակոռուպցիոն կոմիտեի եւ պահանջել են կոմիտեի ղեկավար Սասուն Խաչատրյանին հանդիպել իրենց հետ:



«ժողովուրդ» օրաթերթին ծնողները հայտնեցին, որ 4 զինվորի ծնողի ընդունել է կոմիտեի ղեկավարի տեղակալը ու լսել նրանց բողոքը:

Իսկ ինչից դրդված են ծնողները հասել Հակակոռուպցիոն կոմիտեի: Վերջիններս մեզ հետ զրույցում հայտնեցին, որ մասնակցի տեղեկանալով, որ Դատաբաժնական գիտագործնական կենտրոնի տնօրեն Սիեր Բիշարյանի դեմ հարուցված քրեական գործ կա՝ շտապել են Հակակոռուպցիոն կոմիտեի, որ հասկանան, թե արդյոք քրեական գործը հարուցվել է 44-օրյա պատերազմում զոհված իրենց երեխաների ԴՆԹ եզրակացությունների խայտառակ դեպքերի հետ, ինչի մասին իրենց տարիներ շարունակ բարձրաձայնում են: Եղել է նախադեպ, երբ զինվորի ծնողին տվել են երեք ձեռք՝ հայտարարելով, որ այդ երեք ձեռքն էլ զոհված որդուն են: Մեկ այլ ծնողի դեպքում էլ, 43 համարի կոշիկ հագնող ու բարձրահասակ զինվորի ԴՆԹ-ի փոխարեն, 1,60 հասակով զինվորի ԴՆԹ են նույնականացրել եւ այսպես շարունակել:

Արդյունքում պատերազմի մասնակից զինվորների ծնողներին Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար կազմը բացատրել է, որ իրենք քննություն են իրականացնում ԴՆԹ նույնականացման փորձաքննությունների համար նախատեսված սարքավորումների ձեռք բերման նպատակով դեռեւս երեքուկես տարի առաջ կնքված կասկածելի գործարքի շուրջ եւ իրենց մատնանշած դեպքերով քննություն չեն իրականացնում: Այսինքն՝ ծնողների բողոքը չի դարձել մեղադրանքի հիմք:


«ժողովուրդ» օրաթերթին ծնողները հայտնեցին, որ կրկին հուսահատված լքել են Հակակոռուպցիոն կոմիտեն, քանի որ գործ է քննվում ոչ թե տարիներ շարունակ իրենց բարձրաձայնած դեպքերի շուրջ, այլ միանգամայն այլ գործընթացների հետ կապված:

Նշենք, որ Դատաբաժնական գիտագործնական կենտրոնի տնօրեն Սիեր Բիշարյանը, որը նախօրեին ձեռքազրկվել էր պաշտոնական դիրքի չարաշահման, պաշտոնական կեղծիքի մեղադրանքով, ԴՆԹ նույնականացման սարքերի ձեռք բերման գործով Հակակոռուպցիոն դատարանի որոշմամբ ազատ է արձակվել:

Pegasus

ՀՄԿԵԼՈՒ ՄԱՍՇՏԱԲՆԵՐԸ ՄԵԾ ԵՆ

Լեհաստանի հասուկ ծառայությունները կարող են օգտագործվել իննել խայտառակ Pegasus լրտեսական ծրագրի երկրում ավելի քան 100 հազարական գործիչների խոսակցությունները գաղտնալսելու համար: Այս մասին տեղեկանում ենք «SUSU» գործակալությունից:



Ըստ հրապարակված Super Express թերթին տված հարցազրույցում Լեհաստանի հետախուզական ծառայությունների համակարգող նախարար Տոմաշ Սեմոնիակը հայտնել է, որ Pegasus-ի օգտագործմամբ քաղաքական գործիչներին հսկելու մասշտաբներն «ավելի մեծ էին, քան նշվել էր ասելուսներում, որոնցում խոսվում էր մի քանի կամ մի քանի տասնյակ մարդու մասին»:

Նախարարը հայտնել է, որ Արդարադատության նախարարության ղեկավար Ադամ Բոդնարի հետ միասին կձգտի հասնել այն բանին, որ հրապարակի այն մարդկանց ցուցակը, որոնց գաղտնալսել են հատուկ ծառայությունները:

Ավելի վաղ Սեյմի (Լեհաստանի խորհրդարանի ստորին պալատ) պատգամավոր եւ լրտեսական Pegasus ծրագրի կիրառումը հետաքննող խորհրդարանական հանձնաժողովի անդամ Մարչին Բոսացկին հայտարարել էր, որ խոսք կարող է լինել հարյուրից ավելի անձանց մասին: Փետրվարի 13-ին Լեհաստանի վարչապետ Դոնալդ Տուսկը նախագահ Անջեյ Դուդայի հետ անցկացված նախարարների կաբինետի խորհրդակցության ժամանակ հաստատել էր Pegasus-ի լայն օգտագործումը երկրում: Տուսկը նախագահ

ինն էր փոխանցել լրտեսական ծրագրի գնման, ինչպես նաև դրա օրինական եւ անօրինական օգտագործման մասին փաստաթուղթ: Տուսկն ընդգծել էր, որ գաղտնալսումներից տուժած քաղաքական գործիչների ցուցակը շատ մեծ է:

Ինչպես ավելի վաղ հայտնել էր RMF FM ռադիոկայանը, վկայակոչելով սեփական հետաքննությունը, լեհական հետախուզական ծառայությունները գաղտնալսել են «Իրավունք եւ արդարություն» կուսակցության անդամ Մատեուշ Մորավեցկիի հեռախոսազրույցները, երբ նա զբաղեցնում էր վարչապետի պաշտոնը (2017-2023 թթ.), ինչպես նաև իշխող կուսակցության եւս շուրջ 30 քաղաքական գործիչների: Գաղտնալսվել են նաև գործող կառավարության ներկայացուցիչները, որոնք այն ժամանակ ընդդիմադիր էին:

Ավելի վաղ Տուսկի կառավարությունը որոշում էր ընդունել նախորդ կառավարության օրոք լրտեսական ծրագրի ենթադրյալ օգտագործման շուրջ հետաքննություն անցկացնել: Օրենսդիրները հաստատել են դրանով զբաղվող հանձնաժողովի կազմը: Հանձնաժողովի առաջին նիստը նախատեսված էր փետրվարի 19-ին:

Զ. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԶՊԵՏՔ Է ԿԵՂԾՎԻ

«ՄԵՐ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՆ Է»

ՉՈՐ ՀԱՇՎԱՐԿԸ՝ ՄԵՂԱՆԻՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը խոսեց Լեռնային Ղարաբաղի հարցում չոր հաշվարկների եւ իր պատասխանատվության մասին:

Փաշինյանն այս մասին խոսեց Մյունխենի եւ հարակից շրջանների հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպմանը՝ արձագանքելով այն հարցին, թե չի կարծում արդյոք, որ միջին վիճակագրական քաղաքացին, գուցե, ունի հարցերին իր արիզմայով, իր տեսանկյունից նայելու հնարավորությունը, բայց նաեւ քաղաքական գործչի կարողությունն այն է, որ չոր հաշվարկներով եւ էմոցիոնալ դաշտից դուրս գտնվելով՝ կարողանա ճիշտ որոշումներ կայացնել:

Փաշինյանը պատասխանեց, որ կան իրավիճակներ, երբ չոր հաշվարկը սեղանին դրված է, եւ դու, դրան նայելով, բախվում ես անհնարիւթյան զգացման:

«Մեր կուսակցական ժողովներից մեկում ասացի՝ մեզ հանցագործությունների մեջ մեղադրում են, բայց եթե ինձ հարցնեն, մեր հանցագործությունն ուրիշ բանի մեջ է. մեր հանցագործությունը Ձեր ասած չոր հաշվարկն է, որ մենք չեկանք, ժողովրդին չասացինք, որ ժողովուրդը, եկեք խոստովանենք, թե ինքնորոշում (Լեռնային Ղարաբաղի-խմբ.) ինչ է նշանակում», - ասաց Փաշինյանը:

Հարցին, թե անընդհատ խոսում է ժողովրդի մասին, բայց ինքը պատասխանատու չի զգում արդյոք այդ հարցում, Նիկոլ Փաշինյանը պատասխանեց.

«Բա ի՞նչ եմ անում, որ չեմ զգում պատասխանատու: Բայց նաեւ նույն ժողովուրդն էր, որ 2018-ին արեց անսխալ դեպ մի բան, որն ամբողջ աշխարհին զարմացրեց: Եվ, երեւի, մեր թիմի մեծ սխալն այն էր, որ մենք հեղափոխությունից հետո հեղափոխություն չարեցինք, այդ թվում՝ Ղարաբաղի հարցում: Չնայած հիմա էլ, որ քննարկում ենք, թիմի ներսում դիմադրության ենք հանդիպում: Մեր թիմում շատ ենք խոսում այդ մասին. բոլորն ասում են՝ դա անհնար էր»:

ԵՐԹՈՒՂՈՒ ԳԻԼԵՄԱՆ

«Վշխատանքներ են տարվում Ադրբեջանից Հայաստանի տարածքով Նախիջեան երթուղի բացելու ուղղությամբ, սակայն կա նաեւ այլընտրանքային տարբերակ Իրանի տարածքով», - Hurriyet թերթին ասել է Թուրքիայի տրանսպորտի նախարար Աբդուլքադիր Ուրալօղլուն:

«Հայաստանով անցնող երթուղու երկարությամբ աշխատանքներ են տարվում: Նրա երկարությունը 43 կիլոմետր է: Բայց եթե հայկական կողմում խնդիրներ կան, ապա Ադրբեջանը կապեր ունի նաեւ Իրանի հետ՝ Իրանի տարածքով միջանցքն անցնելու հնարավորության հետ կապված», - նշել է Ուրալօղլուն:

Նրա խոսքով՝ այժմ դիտարկվում է երկու տարբերակ: Գործը, թե ինչ փուլում է շինարարությունը, թուրք պաշտոնյան ասել է, որ ադրբեջանական կողմը շարունակում է շինարարական աշխատանքները իր տարածքում: Մրցույթ է հայտարարվել նաեւ Թուրքիայից Նախիջեան ճանապարհի կառուցման համար:

«Հայաստանում Սահմանադրությունը կփոխվի, եթե ժողովրդի մեծամասնությունն այդպես որոշի. Սահմանադրության փոփոխության մտադրությունը միայն Հայաստանի ներքին գործն է, կապված է ներքին հարցերի կազմակերպման, կարգավորման հետ», - ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում վստահեցրեց իշխանական «Քաղաքացիական դաշմանագիր» խմբակցության դասգամավոր Գեորգ Պատոյանը:

Անդրադառնալով Հայաստանի Սահմանադրությունը փոխելու վերաբերյալ Ադրբեջանի պահանջների վերաբերյալ հարցին՝ Պատոյանն ասաց. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը կփոխենք, թե ոչ, մեր ներքին գործն է: Սահմանադրությունը փոխելու շատ հստակ սուբյեկտներ կան, որոնք ինչ-որ դեպքերում կարող են այդ փոփոխություններն անել: Դա Հայաստանի Սահմանադրության մեջ փոփոխություն անելու կամ Սահմանադրությունը փոխելու իրավունք ունեցող սուբյեկտների եւ սահմանադրի՝ ժողովրդի որոշելիքն է: Եվ դա բացարձակապես կապված է Հայաստանի ներքին հարցերի կազմակերպման, կարգավորման հետ: Դա որեւէ կերպ չի կարող կապ ունենալ որեւէ երկրի պահանջների հետ, դա անթույլատրելի է, այդպես չի լինելու, վստահաբար ասում եմ»:

Պատգամավորն ընդգծեց՝ եթե ՀՀ-ում կիսավաճկի ընտրական իրավունք ունեցող մարդկանց նվազագույնը 25 տոկոսից ավելի զանգված, եւ նրանց քվեարկությունը 50 եւ ավելի տոկոսով կլինի կողմ, ապա Հայաստանում կփոխվի Սահմանադրություն: Եթե չի հավաքվի, ապա Սահմանադրություն չի փոխվի:

«Սա նշանակում է, որ Հայաստանում Սահմանադրությունը փոխելու է ժողովուրդը: Եթե կլինի այնպիսի բան, որի հետ ժողովուրդը ինդիք ունի, կողմ չի քվեարկի», - ասաց Պատոյանը:

Պատգամավորը շատ էական հանգամանք համարեց այն, որ ՀՀ-ում 2018 թվականից հետո ընտրություններ չեն



կեղծվել եւ չեն կեղծվելու: «Եթե այդ գործընթացը տեղի ունենա, պետք է հաշտ լինենք դրա հետ, եթե չընդունվի, կրկին պետք է հաշտ լինենք: Անթույլատրելի է, որ 1 քվե կեղծվի, չպետք է կեղծվի 1 քվե. ես ինքս պայքարելու եմ, որ որեւէ քվե չկեղծվի», - ասաց Պատոյանը:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հունվարին հայտարարել էր, որ Հայաստանը կարիք ունի նոր Սահմանադրության: Ըստ նրա՝ Հայաստանը պետք է ունենա Սահմանադրություն, որը Հայաստանի Հանրապետությունն ավելի մրցունակ եւ ավելի կենսունակ է դարձնում աշխար-

հաքաղաքական եւ ռեգիոնալ նոր պայմաններում:

Օրերս Ադրբեջանի նախագահ Իլիհամ Ալիևը հայտարարել էր, որ Հայաստանի հետ խաղաղության պայմանագիր չի լինի, եթե Հայաստանը չփոխի իր Սահմանադրությունը: Դրան ի պատասխան՝ ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը հայտարարել էր, որ Սահմանադրությունը փոխելը Հայաստանի ներքին գործն է, եւ որեւէ արտաքին ուժ իրավունք չունի միջամտել Հայաստանի ներքին գործերին:

ՍՈՍԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՆՑՈՒՂԱՐԶ

«ԳԱ ՄԵՐ ՏԵՍԱԿԱՆՆ Է»

Ռուսաստանի խաղաղապահ զորախմբի՝ Լեռնային Ղարաբաղում տեղակայման նպատակը ԼՂ հայությանը պաշտպանելն էր: Այդ իմաստով այն, որ Լեռնային Ղարաբաղում հայ չկա, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նաեւ ռուսական խաղաղապահ զորախմբի պատասխանատվությունն է համարում:

Մյունխենի եւ հարակից շրջանների հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպմանը Փաշինյանն այս մասին խոսել է՝ անդրադառնալով 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությանը եւ «Զանգեզուրի միջանցքի» մասին Ադրբեջանի խոսույթին:

«2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 9-րդ կետում չկա որեւէ բան, որ միջանցք է անցնելու Հայաստանի տարածքով. հնարավոր չէ դա գտնել: Չկա այդպիսի բան, որ որեւէ այլ երկիր ՀՀ որեւէ տարածք վերահսկելու է: Խոսք է գնում տարածաշրջանային կոմունիկացիաների մասին:

Դուք գիտեք նաեւ, որ մեր դիրքորոշումը ամբողջական ներկայացնելու համար ստեղծել եւ առաջարկել ենք «Խաղաղու-

թյան խաչմերուկ» նախագիծը: Դա մեր տեսլականն է», - ասել է Փաշինյանը:

Ինչ վերաբերում է վտանգներին, վարչապետը նշել է, որ Ադրբեջանի ղեկավարի օգտագործած խոսույթն արդեն ազդանշան է դրանց առկայության մասին:

«Ինչպե՞ս է պետք դիմակայել այդ վտանգներին: Առաջին հերթին դա (վտանգները-խմբ.) նաեւ միջազգային հարաբերություններում պետք է կառավարել: «Խաղաղության խաչմերուկ» ստեղծման պատճառներից մեկը ո՞րն է. Ադրբեջանը փորձում էր տպավորություն ստեղծել, թե մենք չենք ուզում ճանապարհի տալ որեւէ մեկին:

Այն, ինչ խոսվում է, թե Ռուսաստանը պետք է մեր տարածքում որեւէ բան վերահսկի, 9-րդ կետում չկա գրած, էլ չեմ ասում, որ եռակողմ հայտարարության այն մնացած կետերը, ըստ էության, Ադրբեջանը եւ ՌԴ-ն ճղել-զցել են մի կողմ: Այդ 9-րդ կետին հղումն արդեն էլ արդիական չէ, որովհետեւ եւ ՌԴ-ն, եւ Ադրբեջանը նախորդ կետերով իրենց պարտավորությունները ամբողջությամբ խախտել են. այսօր Լեռնային Ղարաբաղում հայ չկա:

Դա նաեւ Լեռնային Ղարաբաղում տեղակայված ռուսական խաղաղապահ զորախմբի պատասխանատվությունն է, որի

տեղակայման նպատակը Լեռնային Ղարաբաղի հայությանը պաշտպանելն էր», - եզրափակեց Փաշինյանը:

ՉԵՆ ԸՆՆԱՐԿԵԼ

Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գեորգ Պատոյանը Էկոնոմիկայի նախարարի պաշտոնում նշանակվելու առաջարկ չի ստացել:

Պատոյանն այս մասին ասաց ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում՝ անդրադառնալով քննարկումներին, թե նախարարի պաշտոնի համար քննարկվում է իր անունը:

Ըստ Պատոյանի տեղեկության՝ այս պահին նախարարի նշանակման մասով որոշում չկա, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունում չեն էլ քննարկել հարցը, բայց կքննարկեն:

Անդրադառնալով իր նշանակման վերաբերյալ քննարկումներին՝ նա ասաց. «Նման առաջարկ ես չեմ ստացել: Ես ԱԺ-ում եմ, աշխատում եմ»:

Ըստ նրա՝ ԱԺ հանձնաժողովի աշխատանքը պակաս պատասխանատու չէ, քան նախարարի աշխատանքը:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԲԱՅԱՍԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

ԳՐՊԱՆԻՆ ԸՆԲՐՎԱԾՈՂ ՆԱԽԱԳԻԾ

2024 թվականի հունվարի 18-ին Իրավական ակտերի նախագծերի հրատարակման միասնական հարթակում e-draft.am-ում ֆինանսավորում էր «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագծի ֆինանսական ժամկետն ավարտվել է, սակայն այն որևէ դրական արձագանք չի ստացել:



Բանն այն է, որ նախագծով առաջարկվում է, որ նոտարական, փաստաբանական եւ վիճակահարչի կազմակերպման գործունեությամբ զբաղվող անձինք իրենց գործունեությունն իրականացնեն շրջանառության հարկի համակարգում: ArmLur.am-ը գրուցել է փաստաբան Արա Զահրաբյանի հետ, որը համարում է, որ սա քաղաքացու գրպանին հարվածելու եւս մեկ նախագիծ է:

գրասենյակներից եւ գործող փաստաբաններից ընդամենը մի քանիսը, որոնք տոկոսային հարաբերակցությամբ 4 % էլ չեն կազմում գործող փաստաբանների եւ փաստաբանական բիզնեսների շրջանում: Ստացվում է՝ այդ 4%-ն անուղղակի առավելություն է ստանալու, իսկ մյուսները ստիպված են լինելու ծառայությունների արժեքը թանկացնել եւ հայտնվել վատ մրցակցային դաշտում»:

Օգտատեր Կարեն Մեծլումյանն էլ գրում է. «Առաջարկում են օրինագիծը հանել շրջանառությունից»:

Օգտատեր Գարիկ Մուսայեյանը գրում է. «Այս օրենսդրական նախագիծը հարկային կարգավորման ոլորտի հետ անուղղակի (երկրորդային) առնչություն ունի, իսկ դրա առաջնային (չորրորդական) նպատակն է անձանց գրկել իրավական պաշտպանություն հայցելու հնարավորությունից: Անգամ հիմա հասարակության զգալի մասին որակյալ իրավաբանական (փաստաբանական) ծառայությունները հասանելի չեն, քանի որ այդ ծառայությունները մատչելի չեն: Ավելին է, որ այս նախագծի ընդունման արդյունքում դրանց գներն էլ ավելի կբարձրանան»:

Փաստաբան Արա Զահրաբյանն ասաց՝ անհավասար վիճակ կարող է ստեղծվել

փոքր փաստաբանական գրասենյակների եւ անհատ ձեռնարկատերերի համար՝ ի տարբերություն խոշոր գրասենյակների: Փաստաբանը կարծում է, որ սա քայլ է, որով իշխանությունները ցանկանում են ավելի շատ գումար տանել պետական բյուջե, առանց հաշվի առնելու փաստաբանական գործունեության իրավապաշտպան բնույթը:

«Այս նախագծի ֆիսկալ ազդեցությունը կասկածելի է: Իրավաբանական անձ հաճախորդների դեպքում ավելացված արժեքի հարկ չի ավելանա պետության մոտ, քանի որ այդ հաճախորդները փաստաբանին վճարած ԱԱՀ-ն կհաշվանցեն: Կավելանա միայն ֆիզիկական անձ հաճախորդների դեպքում: Այսպիսի նախագիծ շրջանառության մեջ դնելուց առաջ պետք է վիճակագրական թվերով ցույց տային, թե ինչ վիճակ է տիրում փաստաբանական շուկայում, եւ ինչ ֆիսկալ ազդեցություն կունենա այս նախագիծը»,- հավելել է Զահրաբյանը:

Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը համակարգում է այս նախագծի դեմ փաստաբանների գործողությունները: Քննարկումներ են եղել, գործություններ են հղվել:

ՔՆՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱ ՏՈՒԺԱԾ

ՀՐԱԶԵՆԻ ԳՈՐԾԱԳՐՈՒՄ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Արթուր Արամի Առաքելյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա դեռեւս քննությանը չպարզված օրը ինքնությունը չպարզված անձից ապօրինի կերպով ձեռք է բերել եւ պահել հրազեն հանդիսացող ակոսափող ինքնաձիգ՝ իր փամփշտատուփով, գործարանային արտադրության, ռազմամթերք հանդիսացող մարտական փամփուշտներ եւ ապօրինի կերպով փոխադրել ու կրել է իր վրա, որի գործարարմամբ հորեղբորը՝ Արշակ Առաքելյանին պաշտպանելու նպատակով 2023 թվականի օգոստոսի 31-ին՝ ժամը 16:10-ի սահմաններում, գտնվելով Վանաձոր քաղաքի Երեւանյան խճուղու 116 հասցեում գործող սզո սրահից դեպի Դիլիջան քաղաքի ուղղությամբ 42 մետր հեռավորության վրա, բազմաթիվ կրակոցներ է արձակել հրազենների գործարարմամբ Արշակ Առաքելյանին ուղղակի դիտավորությամբ ապօրինի կյանքից զրկելու փորձ կատարած Ալիկ Յովսեփյանի եւ Նարեկ Յովհաննիսյանի ուղղությամբ, ինչի արդյունքում հիշյալ ինքնաձիգից արձակված մեկ կրակոցի հետեւանքով գնդակն անդրադարձի ենթարկվելով դիպել է Արթուր Ալիխանյանի ձախ ազդրին՝ վերջինիս առողջությանն անզուգույթյամբ պատճառելով միջին ծանրության վնաս:

Shamshyan.com-ը գրել էր, որ ոստիկաններն ու քննիչները դեպքի վայրում հայտնաբերել էին տարբեր տեսակի հրազեններից կրակված 9 պարկուճ, ու մինչ դեպքի վայրում աշխատում էր քննչական խումբը, «Վանաձոր» բժշկական կենտրոնից ոստիկանության Բազումի բաժնի ահազանգ է ստացվել, որ ոտքի մասում հրազենային վնասվածքներով մի քաղաքացի է բերվել իրենց մոտ: Հիվանդանոց մեկնած ոստիկանության Բազումի բաժնի օպերատիվ խմբին բժիշկները հայտնել են, որ վիրավորը վիրահատարանում է եւ ի վիճակի չէ կատարվածի մասին բացատրություն տալու: Դեպքի փաստով Լոռու մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի մի քանի հոդվածներով նախաձեռնվել է քրեական վարույթ: Ոստիկանությունն ու քննչական բաժինը պարզում են վիրավորի ինքնությունը, եւ արդյոք այլ տուժած կամ տուժածներ կան, թե ոչ: Ծանախի տեղեկություններով՝ դեպքի վայրում օգտագործվել է «Տետ», «Մակարով» տեսակի ատրճանակներ եւ ինքնաձիգ:

Ըստ ձեռք բերված փաստական տվյալների՝ Վանաձոր քաղաքի բնակիչ Ալիկ Յ. -ն, լարված, անբարյացկամ փոխհարաբերությունների մեջ է գտնվել Եղեգնուտ գյուղի բնակիչ Արշակ Առ. -ի հետ ավտոմեքենան վերջինիս եղբորորդու՝ Արթուր Առ. -ի վարած ավտոմեքենայի ուղղությամբ վարելու, իրեն ու ընկերոջը՝ Նարեկ Յ. -ին հայիռյելու, ինչպես նաեւ անձնական այլ հարցի պատճառով:

Գործով նախաքննությունն ավարտվել է, եւ այն ուղարկվել է դատարան: Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԱՐՈՒՅՑ

Ո՞Վ Է ԲՆՆԵԼՈՒ ԲՐԳՈՐԾԸ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, թե ով է ֆինանսավորում Ձինված ուժերի գլխավոր շաբաթի ղեկի նախկին ղեկավար Տիրան Խաչատրյանի ֆրեական գործը: Վերջինս դասավոր Գիանա Վուկեյանն է: ՀՀ զինված ուժերի գլխավոր շաբաթի ղեկի նախկին ղեկավար Տիրան Խաչատրյանի մասնակցությամբ սեղի ունեցած միջադեպի ֆրեական գործը ավարտական փուլին է մտնում, ասել է թե՛ նախաֆինանսական մարմինն առաջիկայում նախաֆինանսության ավարտ կհայտարարի:

թյան նախարարի նախկին տեղակալ, գնդապետ Գարրի Սաֆարյանի որդուն՝ Ակսեն Սաֆարյանին:

Հավելենք, որ ԼՂՀ պաշտպանության նախարարի նախկին տեղակալ, գնդապետ Գարրի Սաֆարյանին եւ նրա տիկնոջը՝ Ռիտա Բաղդասարյանին, հրավիրել են Գլխավոր դատախազություն: Նրանք ծանուցագիր էին ստացել, որ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում իրենց պատկանող գույքի առնչությամբ իրականացվում է ուսումնասիրություն, որի արդյունքում կազմվել է ամփոփագիր: Ծանուցագիրը ստանալու պահից՝ մեկ ամսվա ընթացքում, պետք է ներկայանալ Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն՝ ծանոթանալու գործի նյութերին, ներկայացնելու դիրքորոշում, ինչպես նաեւ հայտարարագիր:

Բանն այն է, որ «Վերածնունդ» ՍՊԸ-ն ներառված է եղել Ստեփանակերտում բարեկարգման աշխատանք իրականացնող ընկերությունների թվում. այն 2020 թվականի դրությամբ 263 մլն 981 հազար դրամի աշխատանքներ է իրականացրել: Ընկերության 50.3 տոկոսը պատկանում է գնդապետ Գարրի Սաֆարյանին, 49.7 տոկոսը՝ նրա կնոջը՝ Ռիտա Բաղդասարյանին:

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների եւ փոխկապակցված անձանց հայտարարագրերում Սաֆարյան Գարրին եւ Բաղդասարյան Ռիտան 2013-2017 թվականներին, աշխատավարձից բացի, այլ եկամուտ չեն ներկայացրել: Թե ինչ գույքերի առնչվող հարցերով են նրանք հրավիրվել Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն, բաց աղբյուրում նշված չէ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 16-ից 19-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 171 դեպք, որոնցից 9-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԾԵՐ ԸՆԵՐ՝ ԳԻԼԻՋԱՆՈՒՄ

Տարիստական Դիլիջան քաղաքում թափառում են անտեր շների խմբեր: Բազմաթիվ են դեպքերը, երբ սոված, ագրեսիվ, անտեր շները հարձակվել են դիլիջանցիների, այդ թվում՝ երեխաների վրա, վնասվածքներ պատճառել: Դիլիջանցի շատ մայրեր անհանգստանում են, մինչև իրենց երեխան դպրոցից բարեհաջող տուն է վերադառնում: Դիլիջանի բնակիչները հայտնեցին, որ տուրիստական քաղաքի անտեր, թափառող շները ավելացել են՝ դրսից բերված շների հաշվին: Դիլիջանցիները մի քանի ազամ տեսել են, որ Լոռու մարզի Լեռ-մունտովի և Ֆիոլետովի գյուղերի բնակիչները տեղափոխում, ավտոմեքենայից Դիլիջանում բաց են թողնում իրենց ծերացած շներին:

ԳՊՐՈՑՆԵՐ ԿԵԱՌՈՒՑՎԵՆ

Տավուշի մարզպետ Յայկ Ղալումյանին հարցում ենք ուղարկել՝ հարցնելով թե «300 դպրոց եւ 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում Տավուշի որ բնակավայրերում են կառուցվում դպրոցների և մանկապարտեզների շենքեր, որքան են կազմում այդ ծրագրերի արժեքները, երբ են դրանք գործարկվելու: Մարզպետարանից հայտնել են, որ ներկայումս Գանձաքար գյուղում կառուցվում է 480 աշակերտի համար նախատեսված միջնակարգ դպրոցի նոր շենք, ծրագրի արժեքը՝ 1 միլիարդ 822 միլիոն 20 500 դրամ, շենքը կգործարկվի 2024թ. հուլիսին: Կիրանց գյուղում 100 աշակերտի միջնակարգ դպրոցի մոդուլային շենքի կառուցման արժեքը 680 միլիոն դրամ է, նախատեսված է շահագործման հանձնել 2024 թվականի մարտին: Դովեղում 100 աշակերտի համար նախատեսված միջնակարգ դպրոցի մոդուլային շենքը կառուցվում է 782 միլիոն դրամ ֆինանսավորմամբ, նախատեսվում է գործարկել 2025թ. դեկտեմբերին: Նախագծային ավարտական փուլում է 250 աշակերտի համար նախատեսված Տավուրի միջնակարգ մոդուլային դպրոցի շինարարության ծրագիրը: Նախագծային փուլում է 432 աշակերտի համար նախատեսված Այրում քաղաքի միջնակարգ դպրոցի կառուցման ծրագիրը: Մրցութային փուլում են նաեւ 432-ական աշակերտի համար նախատեսված Բագրատաշենի թիվ 1 եւ Արծվաբերդի թիվ 1 միջնակարգ դպրոցների շինարարության ծրագրերը, նաեւ 350-ական աշակերտի համար նախատեսված Կոթիի միջնակարգ դպրոցի, Կողբի թիվ 1 միջնակարգ եւ Սեւթարի միջնակարգ դպրոցների շենքերի կառուցման ծրագրերը: Այդ շենքերի շինարարության մեկնարկը կտրվի 2024թ.-ին, իսկ 288 աշակերտի համար նախատեսված Այգեձորի միջնակարգ դպրոցի շինարարության մեկնարկը կլինի 2025թ.-ին: 150 սանի համար նախատեսված Աղավնավանքի կրթահամալիրի, 250 սանի համար նախատեսված Պտղավանի կրթահամալիրի, 300 սանի համար նախատեսված Ոսկեվանի կրթահամալիրի, 400 սանի համար նախատեսված Լուսաձորի կրթահամալիրի, 500 սանի համար նախատեսված Նորաշենի կրթահամալիրի շենքերի կառուցումը նախատեսված է սկսել 2024թ.-ին:

ՆՍԿՆԿ ՄԱՐԶՅԱՆ Տավուշ

ԿԱՆԱԶ ՌԻՍՈՒՑՈՒՄ

ԲԱՐԵՓՈՒԽՈՒՄՆԵՐ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը մասնակցել է «Էրազմուս+» բարձրագույն կրթության ոլորտում կարողությունների զարգացման «Մանկավարժական կրթության փոխակերպումը հանուն կանաչ եւ թվային անցման Հայաստանում եւ Մոլդովայում» ծրագրի մեկնարկին:



ԿԳՄՍ-ից հայտնում են, որ միջոցառմանը ներկա են եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը, Հայաստանում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար Ֆրանկ Յեսսը, Հայաստանում «Էրազմուս+» ծրագրի ազգային գրասենյակի համակարգող Լանա Կառլովան, բուհերի ներկայացուցիչներ, դասախոսներ, ուսանողներ:

Ծրագրի նպատակն է բարեփոխել մանկավարժական կրթությունը Հայաստանում անցում կատարելով ավանդականից դեպի ապագային միտված ուսումնական ծրագրերի եւ ուսուցման մեթոդների, դեպի համարակրթության ազգային նպատակների իրագործում կանաչ եւ թվային ուսուցման միջոցով:

Ծրագրի տեղադրությունը 3 տարի է. ֆինանսավորումն ամբողջությամբ իրականացվում է Եվրամիության «Էրազմուս» ծրագրի շրջանակում: Վերանայվելու եւ ամբողջովին վերափոխվելու է բակալավրի, մագիստրոսական 5-ական եւ 2 կարճաժամկետ ծրագիր:

Ծրագրի համակարգողը Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանն է, գործընկեր բուհերն են ԵՊՀ-ն եւ Շիրակի պետական համալսարանը, ինչպես նաեւ երկու մանկավարժական բուհ Մոլդովայից, որոնք ծրագրի հիմնական շահառուներն են: Ծրագրի շրջանակում նախատեսվում է մշակել ուսուցչի մասնագիտության հայեցակարգը՝ 2027-2035 թվականների համար:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը շնորհավորել է կարելու ծրագրի մեկնարկի առիթով եւ ընդգծել՝ կրթության ոլորտի մեծածավալ բարեփոխումները պահանջում են, որպեսզի այդ փոփոխություններն ունենան իրենց տրամաբանական արտացոլումը մանկավարժական կրթության հայեցակարգում եւ բովանդակության մեջ:

«Մանկավարժական կրթության բարեփոխումը խիստ առանցքային խնդիր է. շատ բան կարող է փոխվել, բայց դպրոցում ամենակարեւոր մարդը շարունակում է մնալ ուսուցիչը, որի ազդեցությունը երեխաների եւ կրթական արդյունքի ու բովանդակության վրա անգնահատելի է:

Անցափ կարելու է, որ մանկավարժական կրթության որակն ու բովանդակությունը համահունչ լինեն ժամանակակից մարտահրավերներին»,- ասել է Ժաննա Անդրեասյանը՝ շնորհակալություն հայտնելով կարելու նախաձեռնության հեղինակներին:

ԿԳՄՍ նախարարը նաեւ ընդգծել է ծրագրի կարելու ոլորտները կրթության ոլորտի մեկ այլ մակարդակի՝ բարձրագույն կրթության բարեփոխումների հայեցակարգում: Նրա գնահատմամբ՝ ամենակարեւոր աշխատանքը բարձրագույն կրթության վերափոխումն է, որպեսզի այն դառնա մրցունակ, միջազգայնորեն ճանաչելի եւ համադրելի: Այս համատեքստում Ժաննա Անդրեասյանը կարելու է այն հանգամանքը, որ ծրագիրն իրականացվելու է 5 գործընկեր բուհերի հետ համագործակցությամբ եւ ՀԳՄՍ համակարգմամբ:

«Սա շատ կարելու աշխատանք է, որն ի սկզբանե աջակցելու է թե՛ միջազգայնացմանը, թե՛ բարձրագույն կրթության որակական փոփոխությանը: Կրթության ոլորտի բարեփոխումների առանցքում բարձրագույն կրթությունն ունի առանցքային նշանակություն: Այս իմաստով հատկապես կարելու է ծրագրի շրջանակում մշակվելիք մանկավարժական կրթության հայեցակարգը, որը, կարծում եմ, ուղենշային փաստաթուղթ կդառնա մեր երկրում: Ոչ միայն՝ մանկավարժական կրթության կազմակերպման եւ առաջնորդման համար»,- ասել է Ժաննա Անդրեասյանը՝ հայտնելով նախարարության պատրաստակամությունն աջակցելու ծրագրի ընթացքին:

Ծրագրի մեկնարկի առիթով ներկայներին ողջունել է նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը՝ ընդգծելով. «Այսօր դպրոցը եւ մանկավարժությունը

նր մարտահրավերային փուլում են. գտնվելով տեխնոլոգիական հեղափոխության ժամանակաշրջանում, երբ ամեն ինչ շատ արագ է զարգանում, դպրոցը եւ ուսուցիչը պետք է հասցնեն համընթաց քայլեր: Հետեւաբար, ուսուցչի դերը, նրա կողմից կիրառվող մեթոդները, դասի կառավարման իրականացումը բոլորովին այլ սկզբունքների վրա պետք է հիմնված լինեն»,- ասել է նախարարի տեղակալը՝ վստահություն հայտնելով, որ ծրագրի շրջանակում իրականացվող բոլոր գործողությունները միտված են լինելու ուսուցիչների՝ անհրաժեշտ հմտություններով ու կարողություններով զինմանը:

Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գեւորգյանի խոսքով՝ հատուկ վերափոխման եւ վերանայման են ենթարկվելու 3 հիմնական ուղղություններ՝ օտար լեզուների, հատուկ եւ ներառական մանկավարժության, ԲՏԾՄ առարկաների ոլորտների բոլոր ծրագրային մոտեցումները եւ մեթոդները, որոնց համար կծեւալորվի հստակ գործիքակազմ:

Հայաստանում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար Ֆրանկ Յեսսն իր հերթին նշել է, որ ծրագրի շրջանակում իրականացվող կանաչ եւ թվային կրթությունն ապահովում է հասարակության կայուն զարգացումը, ինչն էլ առնչվում է մանկավարժական կրթության հիմնահարցերին:

Հայաստանում «Էրազմուս+» ծրագրի ազգային գրասենյակի համակարգող Լանա Կառլովան, կարելու էլով մանկավարժների գործունեությունը, հույս է հայտնել, որ ծրագիրը կօգնի ուսուցիչներին իրենց աշխատանքն ավելի հստակ եւ արդյունավետ կազմակերպել:

ՆՍԿՆԿ ՄԱՐԶՅԱՆ

ԱՅՈՒՑՆԵՐ

ԱՊՕՐԻՆԻ ԸԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երեւանի ընդհանուր իրավասության դատարանում փետրվարի 22-ին կկայանա «Օրրան» բարեգործական կազմակերպության հարեանությունը կառուցվող շենքի շինարարական աշխատանքների ազդեցիկ վերացման դաժան ջոկ նախնական նիստը:

Վարչական եւ երեսնի քաղաքացիական դատարանները կայացրել էին որոշ-

ում, որով պարտադրել էին կառուցապատողին կատարել ապօրինի շինարարությունը: Որոշումը, սակայն, բողոքարկվել էր պատասխանող կողմի՝ կառուցապատողի կողմից:

«Օրրան»-ը 2023թ. դեկտեմբերի 11-ին հրավիրել էր մամուլի ասուլիս՝ ահազանգելու իր հարեանությամբ կառուցվող ապօրինի շինարարության մասին, որը, խախտելով օրենքով սահմանված թույ-

լատրելի 6 մետր հեռավորությունը, կառուցվում է 1,6 մետր հեռավորության վրա՝ վտանգի տակ ղնելով ամեն օր «Օրրան» հաճախող հարյուրավոր երեխաների, աշխատակիցների եւ հյուրերի կյանքը:

Բարեգործական կազմակերպությունն արդեն 23 տարի ամենօրյա օգնություն է ցուցաբերում կարիքավոր ընտանիքների, երեխաների եւ տարեցների:

Ն. ՄԱՐԶՅԱՆ

● Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 41 պատահար. 2 մարդ զոհվել է, 69-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԳԻՐՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՕՐ

ՀԵՏԵՎԵԼՈՎ ԱՐՄԱՏԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴՈՒՅԹԻՆ

Գիրք նվիրելու օրվա առթիվ, որը նվիրված է Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը՝ փետրվարի 19-ին, Հայաստանի գրողների միության անդամները, այլ գրողներ, հետևելով արմատավորված ավանդույթին, միության ղոնգիայի այգում իրենց լավագույն ստեղծագործությունները նվիրեցին դպրոցականներին, ուսանողներին, զրբի բարեկամներին:



Միության նախագահ Էրվարդ Միլիտոնյանը նկատեց, որ մի քանի տարի անց կլրանա Գիրք նվիրելու օրվա 20-ամյակը:

«Տարեցտարի տեսնում եմք, թե ինչպես է տունն արմատավորվում, ինչպես են մարդիկ միմյանց սիրով գիրք նվիրում: Տոնը երբեմն հիշեցնում է երիտասարդությունը, երբ ժամերով սպասում էինք գրախանութների մոտ՝ բաժանորդագրվելու համար», - ասաց նա:

Միլիտոնյանը կարծում է՝ գիրքը դեղի պես է: «Ժամանակին «Նարեկ»-ը դնում էին բարձի տակ ու հավատում, որ այն բուժիչ ազդեցություն ունի: Իսկ այս պահին այն էլ», - նշեց միության նախագահը:

Նա տեղեկացրեց, որ տոնի առթիվ միջոցառումներ են կազմակերպում ոչ միայն Երևանում, այլև Հայաստանի մարզերում, Թբիլիսիում, Զավախքում: Նա հույս ունի, որ գիրք նվիրելը, գրքի մասին խոսելը սովորական երեւոյթ կդառնա ու չի սպասի հատուկ տոների:

Գրող Սամվել Կոսյանը, որը մի շարք ստեղծագործություններ նվիրեց ընթերցողներին, վստահեցրեց, որ Գիրք նվիրելու օրը հիանալի առիթ է գիրքն ընթերցողին հասցնելու համար: «Գրքեր հասնում են այն ընթերցողներին, ովքեր, վստահաբար, կարդալու են դրանք: Այսօր ոչ բոլոր գրքերն են գնում ու կարդում», - ասաց նա:

Ըստ հեղինակի՝ երիտասարդները պետք է բազմաժանր գրականություն կարդան, որովհետեւ ամեն գիրք իր աշխարհն ունի, հարուստ է գիտելիքներով,

հուզական աշխարհով: «Ընտրություն են կատարում մեծահասակները, որոնք ավելին գիտեն, քան երիտասարդները», - ընդգծեց Կոսյանը:

Լրագրող, գրող Մարիետա Խաչատրյանն ընթերցողներին նվիրեց իր «Դեպի կյանք», «Արտաժամանակ» գրքերը, իսկ իր ստացած նվերներից հատկապես արժեքավոր համարեց Սամվել Կոսյանի պոեզիան:

«Կան բազմաթիվ հիանալի գրքեր, որոնք դժվար է գտնել, հեղինակների հետ հանդիպելը ես հեշտ չեմ, իսկ Գիրք նվիրելու օրվա առթիվ այդ հնարավորությունն ընձեռնում է: Գրքերը կարող են երբեմն հասնել պատահական ընթերցողների, որոնք գուցե դրան չունեն, մարդկանց, որոնք հաճախ չեն այցելում գրախանութ, ուստի գիրքը հանրահռչակելու տեսանկյունից շատ էմ կարեւորում այս տոնը», - շեշտեց Խաչատրյանը:

Նա տոնի առթիվ այցելել էր Նաեւ Խնկո Ապրո ազգային մանկական գրադարան, «Զանգակ» գրատուն ու ուրախությամբ փաստել, որ ընթերցողները շատ են եւ ոգետրված:

«Գրականությունը կարիք ունի հանրահռչակման. կան լավ գրողներ, որոնք քչերն են ճանաչում: Ինքս գրականության հանդեպ իմ նկատառումներն ունեմ ու կարծում եմ, որ Հայաստանի գրողների միությունը միայնակ չի կարող նպաստել լավ գրականության տարածմանը: Յուրաքանչյուրը պետք է ջանք թափի դրա համար», - հավաստիացրեց Մարիետա Խաչատրյանը:

Գիրք նվիրելու օրը արմատավորվել է Գրողների միության երջանկահիշատակ նախագահ Լեւոն Անանյանի նախաձեռնությամբ 2008 թվականից:

Տոնի շրջանակում մայրաքաղաքում եւ ՀՀ մարզերում բազմաթիվ միջոցառումներ են իրականացվում: Գրողներն այցելում են դպրոցներ, հաղորդակցվում աշակերտների հետ եւ գիրք նվիրում նրանց, գրախանութներ տոնի կապակցությամբ գրքերը վաճառում են զեղչված գներով, հրատարակչությունները ընթերցաններին նոր գրքեր են ներկայացնում, գրադարաններում ընթերցանության միջոցառումներ են կազմակերպվում:

ՀՈՐԻ ԲՎՂԴԱՍՏՈՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԳՈՐ ԶԷ

Հայաստանի ծանրամարտի հավաքականի անդամ, Եվրոպայի առաջնության արծաթե մեդալակիր Դավիթ Յովհաննիսյանը Եվրոպայի առաջնությունում իր գրանցած արդյունքից գոհ չէ:

«Ընդհանուր առմամբ, մրցաշարը շատ լավ ստացվեց, բայց ես գոհ չեմ իմ արդյունքից: Բայց ոչինչ, կարելու մեր ունիները նորից մեր երկրում են: Չեմ ընկճվում ընդհանրապես: Այս անգամ էլ կբավարարվեմ երկրորդ տեղով: Ժամանակի ընթացքում կուղղեմ սխալներս եւ կփորձեմ նորից դառնալ առաջինը», - ասաց Յովհաննիսյանը:

Վերջինիս խոսքով արդեն երրորդ տարին է, որ ԵԱ-ում մեդալների համար պայքարը ծավալվում է հենց իր ու Հակոբ Մկրտչյանի միջեւ, սակայն իր համար տարբերություն չկա, թե ով կնվաճի ոսկե մեդալը:

Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում ընթացող Եվրոպայի առաջնության մրցումային 7-րդ օրը պայքարի մեջ մտան 96 կգ քաշային ծանրորդները:

Հայաստանի հավաքականի անդամ, Եվրոպայի 2023 թվականի չեմպիոն Դավիթ Յովհաննիսյանը Պոկոմ վարժությունում երկու մոտեցմամբ հաջորդաբար բարձրացրեց 166 եւ 169 կգ: Այս վարժությունում Յովհաննիսյանը դարձավ ոսկե մեդալակիր: Հրոմ ձեւում Յովհաննիսյանը բարձրացրեց 200 եւ 205 կգ: Երկամարտի 374 կգ արդյունքով նա դարձավ Եվրոպայի փոխչեմպիոն: Ոսկե մեդալակիր դարձավ Հայաստանի հավաքականի ներկայացուցիչ Հակոբ Մկրտչյանը:

ԳԺՎԱՐ

ՄՏԱՑՎԵՑ

Հայաստանի ծանրամարտի հավաքականի անդամ Հակոբ Մկրտչյանը Եվրոպայի առաջնության 96 կգ քաշային կարգի մեդալների համար մրցակցությունը դժվարներից մեկն է համարում:

«Եվրոպայի այս առաջնությունը դժվար ստացվեց, քանի որ բազմաթիվ վնասվածքներ ունեի: Ցավեր ունեի ուսերիս հատվածում, արմունկի ցավ: Նույնպես կար: Բայց, այս ամենը հաղթահարելով, ունեցանք այն արդյունքը, որն ունեցք: 96 կգ քաշային կարգում մրցակցությունն իսկապես դժվար էր», - ասաց Հակոբ Մկրտչյանը:

Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում ընթացող Եվրոպայի առաջնության մրցումային 7-րդ օրը պայքարի մեջ մտան 96 կգ քաշային ծանրորդները:

Հայաստանի ընտրանու ներկայացուցիչ Հակոբ Մկրտչյանը Պոկոմ վարժությունում գլխավերելու պահեց 161 եւ 166 կգ: Այս ձեւում նա նվաճեց փոքր արծաթե մեդալ: Հրոմ վարժությունում Հակոբ Մկրտչյանը երեք հաջող մոտեցում ունեցավ՝ 200 կգ, 205 եւ 209 կգ: Այս ձեւում նա դարձավ ոսկե մեդալակիր: Երկամարտի 375 կգ արդյունքով Հակոբ Մկրտչյանը Եվրոպայի առաջնության կրկնակի չեմպիոն դարձավ: Հայաստանի մյուս ներկայացուցիչ Դավիթ Յովհաննիսյանը նույն քաշային կարգում դարձավ արծաթե մեդալակիր:

«ՃԱՄՓՈՐԴ ՀՈԳԻՆ»

«ՊԵՏՔ Է ՈՉ ԹԵ ՆԱՅԵԼ, ԱՅԼ ՏԵՄՆԵԼ»

Հովհաննես Թումանյանի 155-ամյակին նվիրված «Ճամփորդ հոգին» խորագրով միջոցառումները փետրվարի 19-ին մեկնարկեցին Ամենայն հայոց բանաստեղծի թանգարանի բակից:

Հովհաննես Թումանյանի թանգարանի փոխտնօրեն Մանե Խաչատրյանի խոսքով՝ Թումանյանի յուրաքանչյուր հոբելյան տոնական է բոլորի համար:

«Ամեն տարի թանգարանը, իհարկե, մեկ խորագրի ներքո փորձում է ամբողջ տարվա ընթացքում Թումանյանին մի այլ ձեւով բացահայտել: Այս տարի մենք խոսելու ենք Թումանյանի մասին որպես ճամփորդ: Երեկոյան նախատեսվում է ցուցահանդեսի բացում՝ «Ճամփորդ հոգի» խորագրով: Կուզենայի, որ այս ցուցահանդեսից հետո յուրաքանչյուրն իր մեջ արթնացնեց ճամփորդ Թումանյանին: Նա ատում էր, որ պետք է ոչ թե նայել, այլ՝ տեսնել: Շատ էր կարեւորում հայրենիքը ճանաչելն ու բացահայտելը, հատկապես՝ երեխաների համար, որպեսզի հայրենիքը սիրենք ոչ թե կուրորեն, այլ ազգասերի գիտակից սիրով», - համոզմունք հայտնեց փոխտնօրենը:

Անդրադառնալով Թումանյանի թանգարանի շենքի վերանորոգման ընթացքին՝ նա հայտնեց, որ շինարարական աշխատանքների ավարտը նախատեսվում է 2026-2027 թվականներին, իսկ ներկայում գործունեությունը շարունակում են «Հ.Մաթեոսյան» մշակութային կենտրոն-թանգարանի շենքում:

Ավագ գիտաշխատող Անահիտ Նալբանդյանի խոսքով՝ անհնար է չճանաչել ու չսիրել Թումանյանին, որը հայ մարդու ուղեկիցն է դեռ մանկության օրերից:

«Մենք բոլորս ապրում ենք Թումանյանով, մեծանում ենք Թումանյանով, եւ նրա ծնունդը մեր բոլորի ընտանիքներում մեր մեծի ծնունդը պետք է լինի. թանգարանում մենք ասում ենք՝ մեր պապիկի ծնունդը: Կարելի է ասել՝ ծննդյան օրվանից անմիջապես հետո սկսում ենք նախապատրաստվել հաջորդին եւ ամեն ինչն անում ենք անչափ սիրով, ներդրումով, հոգով եւ սրտով», - հավելեց նա:

«Այք» շրջանավարտների «Կամար» երգչախմբի անդամ Տաթև Մարգարյանն օրվա խորհուրդը կարեւորեց որպես Թումանյանին մեծարելու եւ հայ ժողովրդի

համար թողած մեծ ազդեցությունը վերստին ընդգծելու հնարավորություն:

«Կարծում եմ, որ Թումանյանը փոքր տարիքից միևնույն խոր ծերություն հայ մարդու կողքին է՝ որպես գրող, քանի որ շատ բազմաժանր է, եւ մենք բոլոր տարիքներում անչլվում ենք նրա հետ: Փոքր տարիքում, բնականաբար, Թումանյանի հեքիաթներով ենք ծանոթացել նրա հետ, հետո արդեն մեծանալով՝ պոեմներին ենք ծանոթանում, քառյակներին: Այդ ընթացքը շատ հետաքրքիր է, ու Թումանյանը, կարծես, բոլոր տարիքի մարդկանց ասելիք ունի», - ասաց մեր զրուցակիցը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության սննդկուլության դատարանի 05.02.2024թ. թիվ ԱՄԴ/0842/04/23 որոշմամբ՝ ««ԴԻԼԻՋԱՆ» հանքային ջրի գործարան» ՍՊ ընկերության (գրանցման համար՝ 21.110.00429, գրանցման ամսաթիվը՝ 06.08.2002թ., ՀՎՀՀ՝ 07902224, հասցե՝ ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Արթուրյան փողոց, 25 շենք) նկատմամբ սկսվել է լուծարման վարույթ:

● Փետրվարի 22-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա «Յ. Ս. Բախ. «Սի միևնոր Մեսսա»» համերգը: Տոմսերի արժեքը՝ 3000-15000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:30-ին:



Էջը՝ ՄԱՌԻԱՍ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ՝ ինչ է միանվագ վճարը: Ինչի՞ հիման վրա է վճարվում այն: Համլետ Պետրոսյան (66 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հ. Պետրոսյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ միանվագ վճարը կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո անձի կենսաթոշակային հաշվում առկա միջոցներն ամբողջապես մասնակցին միանգամից վճարելն է:

Եթե մասնակցի՝ կուտակային միջոցները հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը փոքր է հիմնական կենսաթոշակի 75 տոկոսից կամ հավասար է դրան, ապա մասնակցին իրավունք ունի կուտակած միջոցները ստանալ միանվագ վճարների ձևով: Բացի դրանից, եթե մասնակցի՝ կուտակային միջոցները հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը գերազանցում է հիմնական կենսաթոշակի հնգապատիկը, ապա մասնակցը պարտավոր է կնքել հիմնական կենսաթոշակի հնգապատիկն ապահովող անուիտետի պայմանագիր, իսկ մնացած մասը կարող է ստանալ ունի ստանալ միանվագ վճարի տեսքով:

Բացի վերը նշվածը՝ կենսաթոշակային հաշվում առկա միջոցները միանվագ վճարի ձևով վճարվում են նաեւ՝

1. մասնակցի՝ նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչվելու դեպքում,

2. մասնակցի՝ ծայրահեղ ծանր վիճակում գտնվելու եւ կենսական կարելու օրգանների անբուժելի ախտահարումով հիվանդ լինելու դեպքում:

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՎՈՒՐԳ». Նպաստը նշանակելու եւ վճարելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում նպաստի՝ ուղղակի վճարվող գումարը գրանցվում է հաջորդ ամսվա վճարման ցուցակներում:

ԿՃԱՐՆԵՐ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ եթե հասարակական կազմակերպությունը ֆիզիկական անձին կրթաթուղթ է տալիս, ապա արդյո՞ք եկամտային հարկի դարձվորություն առաջանում է: Սուսանա Վարդանյան (53 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ համաձայն «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 18 կետի՝ նվազեցվող եկամուտներ են համարվում բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, ասպիրանտներին, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողներին, հոգեւոր ուսումնական հաստատությունների ունկնդիրներին պետության կողմից վճարված, ինչպես նաեւ այն կրթաթոշակները, որոնք նրանց համար նշանակվում են այդ ուսումնական հաստատությունները կամ նշված հոդվածի 1-ին մասի 14-րդ եւ 15-րդ կետերում նշված կազմակերպությունները:

Այսինքն՝ հասարակական կազմակերպության կողմից ֆիզիկական անձին նշանակված կրթաթոշակը նվազեցվող եկամուտ է հանդիսանում, եւ եկամտային հարկի պարտավորություն չի առաջանում:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՎՈՒՐԳ». Ավելացնենք, որ հարկային գործակալները պարտավոր են ֆիզիկական անձանց պահանջով նրանց տրամադրել հաշվարկված եւ վճարված եկամուտների, պահված հարկի գումարների վճարումների մասին տեղեկանքներ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Համայնքին մատակարարված 30 նոր ավտոբուսները շուտով կհամալրեն Երեւանյան երթուղիները:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



☾	Շիրակ	0 + 1 + 3 + 6	☾	Արարատ	+ 4 + 7 + 12 + 14
☾	Կոտայքի լեռներ	0 - 3 + 2 + 5	☾	Արմավիր	+ 4 + 7 + 11 + 13
☾	Կոտայքի նախալեռներ	+ 4 + 6 + 7 + 10	☾	Վայոց ձորի լեռներ	- 1 - 5 + 2 + 4
☾	Գեղարքունիք	- 3 + 1 + 2 + 6	☾	Վայոց ձորի նախալեռներ	+ 5 + 7 + 10 + 14
☾	Լոռի	- 1 + 2 + 2 + 5	☾	Սյունիքի հովիտներ	+ 2 + 5 + 8 + 11
☾	Տավուշ	0 + 5 + 3 + 7	☾	Սյունիքի նախալեռներ	- 1 + 2 + 3 + 5
☾	Արագածոտնի լեռներ	0 - 3 + 2 + 4	☾	ԼՂՀ	- 1 + 3 + 3 + 6
☾	Արագածոտնի նախալեռներ	+ 4 + 7 + 8 + 12	☾	Երեւան	+ 8 + 10 + 13 + 15

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22^ա/3, հեռ.՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 19.2.2024

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրայնաչափվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: